Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃՕՁԲ-26/1» էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը սկսվեց 27.10.2026թ. ժամը 15:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Մարտիրոսյան – ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի պետի պարտականությունները կատարող

Հանձնաժողովի անդամներ՝

Փ. Քալաջյան - «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ-ի տեխնիկական դեպարտամենտի համակարգչային ցանցի ավագ ադմինիստրատոր.

Ա. Հովսեփյան - «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ-ի տեխնիկական դեպարտամենտի համակարգչային ցանցի ավագ ադմինիստրատոր:

Գնումները համակարգող

Լ.Սահակյան՝ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամ

Ս. Մուշեղյան – ֆինանսների նախարարության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.

1. Տեղեկություններ մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից ներկայացված հիմնավորումների վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

2.Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հակադարձ աճուրդի օրը՝ 27.10.2026թ.-ին ժամը 15:00-ին:

Գնման վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն պահանջվել:

Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:

3.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃՕՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«ՄՈԴԵՐՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հասցե. Երևան, Ադոնց 6/2
«Ստեպ Լոջիկ ՍՊԸ»	ՀՀ, Երևան 0015, Արգիշտի 7

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հաշվի առնելով, որ բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մյուս մասնակիցների հայտերը մերժվում են՝ հանձնաժողովի կողմից գնահատվել են միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի /1-ին չափաբաժնի մասով «ՄՈԴԵՐՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի/ ներկայացված հայտը, համաձայն որի «ՄՈԴԵՐՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, այն է.

-Մասնակցի կողմից ներկայացավաձ Հավելված 1.3-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է, մասնավորապես ներկայացված չէ 2026 թվականին վերաբերող տեղեկատվությունը:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

1. «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացվում են ստորև:

Չ/հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները									
		«Ստեպ Լոջիկ» ՍՊԸ					«ՄՈԴԵՐՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ				
		Արժեք (ՀՀ դրամ)		ԱԱՀ (%)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)		Արժեք (ՀՀ դրամ)		ԱԱՀ (%)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)	
		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ
1	Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ/նախահաշվային գինը՝ 3,400,000 ՀՀ դրամ/	2,831,000	2,690,000	20	3,397,200	3,228,000	3,096,000	2,661,690	20	3,715,200	3,194,028

6. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

- կասեցնել նիստը և ծանուցել «ՄՈԴԵՐՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- նիստը վերսկսել 29.10.2026թ. ժամը 12:00-ին:

29.10.2026թ. ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովը, որի աշխատանքներին չէր մասնակցում գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ս. Մուշեղյանը շարունակեց կասեցված նիստի աշխատանքները:

Քարտուղարը տեղեկացրեց, որ «ՄՈԴԵՐՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է շտկված փաստաթուղթը:

-ընտրված մասնակից ճանաչել «ՄՈԴԵՐՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ -ին,

-գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի Նախագահ _____ **Ա. Մարտիրոսյան**

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ **Փ. Քալաջյան**

_____ **Ա. Հովսեփյան**

Գնումները համակարգող՝ _____ **Լ.Սահակյան**